ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ **քննող անձ**

թիվ ՍՑ-ԱՄ-2018/50

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.05.2018թ. թիվ 03/26-3/8052-18 գրությամբ «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.04.2018թ. թիվ ԴՎԱ/1181 և 03.05.2018թ. թիվ ԴՎԱ/1520 գրությունների հիման վրա, 04.05.2018թ. թիվ 03/26-3/8052-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **«Ապարանք Շանթ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/50 ընթացակարգի շրջանակներում 10.05.2018թ. ժամը 10:20-ին և 14.05.2018թ. 10:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 06.04.2018թ. թիվ ԴՎԱ/1181 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/23» ծածկագրով բաց մրցույթի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի կողմից «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ն 5-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Սահմանված կարգով Ընկերությանը Armeps.am համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներակայացնելու վերաբերյալ: Սահմանված ժամկետում Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ, որոնց վերաբերյալ սահմանված կարգով ծանուցվել է Ընկերությանը:

«Ապարանք Շանթ» ՍՊԸ-ի կողմից պահանջվող շտկումները թերի են կատարվել, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 48-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշել է Ընկերության հայտը մերժել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/50 ընթացակարգի շրջանակներում 10.05.2018թ. ժամը 10:20-ին և 14.05.2018թ. 10:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/50 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/50 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/23» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը 2-րդ չափաբաժնի մասով կազմել է 136 160 640 ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժնի մասով՝ 146 768 760 ՀՀ դրամ, 4-րդ չափաբաժնի մասով՝ 124 135 872 ՀՀ դրամ, ***5-րդ չափաբաժնի մասով՝ 146 792 448 ՀՀ դրամ***:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 12.02.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետի 4.1 ենթակետով կայացված որոշմամբ «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 5-րդ չափաբաժնի մասով, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 01.03.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ի ***հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է 114 479 723 ՀՀ դրամ:***

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 15.03.2018թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցել է «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ին՝ հայտնելով, որ վերջինիս կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ եզրակացության Ընկերության հայտը ներկայացնելու նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից.

- Ընկերության կողմից ներկայացված հավելված 6 և 6.1-ում բացակայում են էլեկտրոնային թվային ստորագրությունները և հավելված 6.1 ներկայացված տեխնիկական բնութագրերի մաս կազմող ծանոթություն դաշտը, ինչպես նաև ներկայացված պայմանագիրը չի համարվում նմանատիպ, քանի որ Ընթացակարգի հրավերի համաձայն՝ նմանատիպ են համարվում հրուշակեղենի մատակարարման պայմանագրերը, իսկ Ընկերության ներկայացրած պայմանագիրը՝ խաղալիքների հավաքածուների մատակարարման պայմանագիր է:

Վերոհիշյալ ծանուցմամբ Ընկերությանը առաջարկվել է մեկ աշխատանքային օրյա ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.03.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.1-ին ենթակետի համաձայն՝ «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.05.2018թ. թիվ 03/26-3/8052-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.04.2018թ. թիվ ԴՎԱ/1181 և 03.05.2018թ. թիվ ԴՎԱ/1520 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝

3) էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

4) էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի

Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

Նույն կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/23» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ -7/23» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընկերությունը հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը 2-րդ չափաբաժնի մասով կազմել է 136 160 640 ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժնի մասով՝ 146 768 760 ՀՀ դրամ, 4-րդ չափաբաժնի մասով՝ 124 135 872 ՀՀ դրամ, ***5-րդ չափաբաժնի մասով՝ 146 792 448 ՀՀ դրամ***:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 12.02.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետի 4.1 ենթակետով կայացված որոշմամբ «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 5-րդ չափաբաժնի մասով:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 01.03.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝

«Ապարանք Շանթ» ՍՊԸ-ի ***հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է 114 479 723 ՀՀ դրամ:***

Այսպիսով՝ համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 01.03.2018թ. տրամադրված եզրակացության՝ «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է ***114 479 723 ՀՀ դրամ, որն արձանագրում եմ, որ պակաս է Ընկերության կողմից Ընթացակարգի 5-րդ չափաբաժնի համար (որի մասով Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից) ներկայացված գնային առաջարկից (146 792 448 ՀՀ դրամ):***

Դրա հետ մեկտեղ Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.5-րդ ենթակետով սահմանվել է, որ ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում 2,3,4,5-րդ չափաբաժինների համար ***հրուշակեղենի մատակարարված լինելը***: Մինչդեռ Ընկերությունը որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող նմանատիպ պայմանագիր ներկայացրել է ***ՀՀ ոստիկանության և «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ի միջև 25.12.2017թ. կնքված խաղերի հավաքածուի գնման թիվ «ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՊՁԲ-2017/ՔԱԽՑ-7/3» պայմանագիրը:***

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 15.03.2018թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցել է «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ին՝ հայտնելով, որ վերջինիս կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ. մասնավորապես՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ եզրակացության

Ընկերության հայտը ներկայացնելու նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից, Ընկերության կողմից ներկայացված պայմանագիրը չի համարվում նմանատիպ, քանի որ Ընթացակարգի հրավերի համաձայն՝ նմանատիպ են համարվում հրուշակեղենի մատակարարման պայմանագրերը, իսկ Ընկերության ներկայացրած պայմանագիրը՝ խաղալիքների հավաքածուների մատակարարման պայմանագիր է:

Ընկերության կողմից սահմանված ժամկետում վերոհիշյալ անհամապատասխանություններ չեն շտկվել:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերը սահմանում է, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն և ֆինանսական միջոցներ:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը՝գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ ֆինանսների նախարարությունը, որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 13-րդ կետով նախատեսված լիազորված մարմին, «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ տարաբնույթ ընկալվող դրույթների վերաբերյալ» 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանման մեջ նշել է, որ նկատի ունենալով, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության վերաբերյալ, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը չի բավարարում հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, ուստի այդ հանգամանքը

դիտարկվում է որպես մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչի արդյունքում դադարեցվում է այդ մասնակցի հետագա մասնակցությունը գնման գործընթացին և մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Դրա հետ մեկտեղ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ին ուղղված անհամապատասխանությունը շտկելու ծանուցման մեջ նշվել է, որ Ընկերության կողմից ներկայացված հավելված 6 և 6.1-ում բացակայում են էլեկտրոնային թվային ստորագրությունները և հավելված 6.1-ով ներկայացված տեխնիկական բնութագրերի մաս կազմող ծանոթություն դաշտը:

Այսպես՝ Ընթացակարգի հրավերով 5-րդ չափաբաժնի համար նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

քաղցր թխվածքաբլիթներ (Թխվածքաբլիթ)	Թխվածքաբլիթ շաքարային, ԳՕՍՏ 24901-14: Մեկ թխվածքաբլիթի քաշը 15 գր +/-2 գրամ, պատրաստված բարձր տեսակի ցորենի ալյուրից, շաքարի ընդհանուր զանգվածը 35%-ից ոչ ավել, ճարպի զանգվածային մասը 30%-ից ոչ ավել, թափանցիկ պոլիէթիլենային ներդիրով, թղթյա փաթեթավորմամբ՝ դաշտային համազգեստի երանգով, տուփի կողմամասերը տեսանելի, 1 տուփի քաշը 210 գրամ, ստվարաթղթե արկղերում՝ մեկ արկղի մեջ 50 տուփ: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 3 ամիս: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 90%: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011 և 022/2011, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:
Ծանոթություն՝	
Շոկոլադե սալիկների, քաղցրաբլիթի, թխվածքաբլիթի և կոնֆետի արկղերի ու տուփերի վրա դրոշմված լինի՝	
1. Արտադրող ձեռնարկության անվանումը	
2. Արտադրանքի անվանումը, տեսակը	
3. Արտադրության ժամկետը	
4. Մատակարար ձեռնարկության անվանումը	
5. Պահպանման ժամկետը	
6. Ապրանքի քաշը՝ սալիկների և տուփերի վրա մակնանշվում է նետտո քաշը, իսկ արկղերի վրա սալիկների և տուփերի քանակը	
7. <<Հինվորի բաժին: Վաճառքի ենթակա չէ>> գրառում	
8. Օրենքով սահմանված այլ տեղեկատվություն	
9. Արկղերի վրայի գրառումները մակնանշված լինեն տեսանելի վայրում, ներկով 7-ից 10մմ բարձրությամբ տառերով, տվյալապրանքատեսակին չվերաբերվող այլ գրառումներ չի թույլատրվում:	
10. Ստվարաթղթե ամուր արկղերով, հնգաշերտ ծալքավոր:	
11. Գործարանային փաթեթավորումը խախտված ապրանքատեսակների մատակարարումն արգելվում է:	

Ընկերության կողմից հայտի թիվ 6.1 հավելվածը ներկայացվել է հետևյալ ձևով՝

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	անվանումը	ապրանքանշանը	արտադրողի անվանումը	ծագման երկիրը	տեխնիկական բնութագրերը

5	Քաղցր թխվածքաբլիթներ (թխվածքաբլիթ)	Elit Shant	«Էլիտ Շանթ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	Թխվածքաբլիթ շաքարային, ԳՕՍՏ 24901-14; Մեկ թխվածքաբլիթի քաշը 15 գր +/-2 գրամ, պատրաստված բարձ տեսակի ցորենի ալյուրից, շաքարի ընդհանուր զանգվածը 35 %-ից ոչ ավել, ճարպի զանգվածային մասը 30% -ից ոչ ավել, թափանցիկ պոլիէթիլենային ներդիրով, թղթյա փաթեթավորմամբ՝ դաշտային համազգեստի երանգով, տուփի կողմասերը տեսանելի, 1 տուփի քաշը 210 գրամ, ստվարաթղթե արկղերում՝ մեկ արկղի մեջ 50 տուփ: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 3 ամիս: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 90 %: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011 և 022/2011: «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի

Ընկերության կողմից հայտի 6.1 հավելվածով ներկայացված տեխնիկական բնութագրի մեջ չեն նշվել Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի «Ծանոթություն» բաժնում նշված պահանջների վերաբերյալ տեղեկությունները, որոնք որպես առաջարկվող ապրանքին ներկայացվող պահանջներ, նույնպես պետք է ներառված լինեն մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում:

Դրա հետ մեկտեղ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/23» ծածկագրով բաց մրցույթը կազմակերպվել է էլեկտրոնային եղանակով՝ Armeps համակարգի միջոցով, իսկ Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետը սահմանում է, որ գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Տվյալ դեպքում՝ Ընկերության կողմից ներկայացված հավելվածներ 6-ը և 6.1-ը որպես հայտում ներառվող փաստաթղթեր, հաստատված չեն եղել Ընկերության էլեկտրոնային ստորագրությամբ, այլ փաստաթղթերը ներկայացրել է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 13-րդ կետով նախատեսված լիազորված մարմին, «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ տարաբնույթ ընկալվող դրույթների վերաբերյալ» 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանման մեջ նշել է, որ եթե գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը չի բավարարում հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, իսկ ապրանքների գնման դեպքում նաև Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն և մասնակիցը մեկ աշխատանքային օրվա ընթացքում չի շտկում անհամապատասխանությունը, ապա, անկախ նշված ժամկետից հետո այդ անհամապատասխանությունը շտկելու հանգամանքից, պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին:

Ընդ որում, այս դեպքում, նկատի ունենալով, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին, իսկ ապրանքների գնման դեպքում նաև հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը չի բավարարում հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, իսկ ապրանքների գնման դեպքում նաև Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն, ուստի այդ հանգամանքը դիտարկվում է որպես մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչի արդյունքում

դադարեցվում է այդ մասնակցի հետագա մասնակցությունը գնման գործընթացին և մասնակիցը ներառվում է ցուցակում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/23» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.05.2018թ. թիվ 03/26-3/8052-18 գրությամբ «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01240868) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**